

ԷԿՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Փեթակչյան Մ. Հ.

Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստանի Հանրապետություն
marina.petakchyan@ysu.am

Այսօր Էկոզբոսաշրջությունը կարևոր դերակատարում ունի համաշխարհային զբոսաշրջության ոլորտում: Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) փորձագետների կանխատեսումների համաձայն՝ 21-րդ դարում նրա աճի տեմպերը կշարունակեն բարձր լինել, և ստացվող եկամուտը մեծ նշանակություն կունենա առանձին երկրների, հատկապես զարգացող երկրների տնտեսության զարգացման գործում: Պատահական չէ, որ Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) 2002 թվականն անվանել է Էկոզբոսաշրջության և լեռների տարի (Храбовченко В. В., 2004): «Էկոզբոսաշրջություն» հասկացությունն առաջարկվել է 1980թ-ին մեքսիկացի տնտեսագետ Հեկտոր Ցեբալլոս Լասկուրեյնի կողմից: Ըստ նրա «Էկոզբոսաշրջություն ճանապարհորդության համադրումն է բնության հանդեպ պահպանողական վերաբերմունքի հետ և թույլ է տալիս միավորել ծանոթության հիացմունքը ֆլորայի և ֆաունայի տեսակների ճանաչման հետ՝ հնարավորության դեպքում համատեղելով վերջիններիս պահպանությունը» (Косолапов А. В., 2005): 1999թ-ին Մարտ Հանը տվել է Էկոզբոսաշրջության հետևյալ մեկնաբանումը: Ըստ այդ սահմանման՝ «Էկոզբոսաշրջությունը ճամփորդություն է դեպի լավ, առողջ և սովորականի պես պահպանված զգայուն շրջաններ» (Honey M. 1999): Ի. Զորինը և Յու. Շոյուները Էկոզբոսաշրջությունը բնութագրում են որպես բնօգտագործման յուրահատուկ համակարգ՝ նշելով ուսումնասիրելու երեք ուղղություն՝ բնության պահպանումը զբոսաշրջությունից, բնության պահպանումը զբոսաշրջության համար, բնության պահպանումը զբոսաշրջության ուժերով: 1996 թվականին IUCN-ի կողմից ընդունվել է հետևյալ սահմանումը՝ «Էկոզբոսաշրջությունը պատասխանատու ճամփորդություն և այցելություն է բնական շրջաններ» (Holden A., 2005): Էկոզբոսաշրջության համաշխարհային ասոցացիան այն մեկնաբանում է հետևյալ կերպ՝ «Էկոզբոսաշրջությունը պատասխանատու ճամփորդություն է, որը պետք է պահպանի բնությունը և անձի կայունացման պատճառ դառնա» (Hawkins K. & D., 2001): Էկոզբոսաշրջության գլխավոր առանձնահատկությունը համեմատաբար չխաթարված բնությունն է, իսկ նպատակը՝ չխախտել Էկոհամակարգի ամբողջականությունը: Էկոզբոսաշրջությունը բնորոշվում է բազմազան գործառույթներով՝

- տնտեսական գործառույթ՝ տեղական տնտեսության պահպանություն,
- սոցիալական գործառույթ՝ ավանդական մշակույթի պահպանություն և տարածաշրջանում սոցիալական դրության բարելավում,
- Էկոլոգիական գործառույթ՝ բնական տարածքների պահպանություն, կենսաբազմազանության պահպանություն,

➤ հումանիստական գործառույթ՝ շրջակա աշխարհի ճանաչողությունն իր բազմազանության մեջ, գեղագիտական արժեքների ձևավորումը՝ կապված բնության պահպանության և մշակութային ժառանգության պահպանության հետ: Հետագերը ներկայացնում է էկոզբոսաշրջությունը բնութագրող չորս չափանիշ (Hawkins K. & D., 2001)՝

- շրջակա միջավայրի նվազագույն բացասական ազդեցություն,
- նվազագույն բացասական ազդեցություն մշակույթի վրա և առավելագույն պատասխանատվության ստանձնում հյուրընկալող հասարակության մշակույթի նկատմամբ,
- հյուրընկալող հասարակության համար տնտեսական առավելագույն շահագործում,
- զբոսաշրջիկի համար զվարճանքի առավելագույն ապահովում:

Էկոզբոսաշրջության նպատակային կազմակերպման սկզբունքների, մեթոդների, աշխարհայացքի մշակմամբ զբաղվում են մի շարք գիտություններ: Նրանց մեջ իր կարևոր տեղն ունի աշխարհագրությունը, որը խնդրի լուծումը տեսնում է ժամանակի, տարածության և համալիրության մեջ: Էկոզբոսաշրջությունը օժտված է տարածականությամբ այնքանով, որ այն կազմակերպվում է կոնկրետ վայրում, որոշակի սահմաններում: Ցանկացած տարածքում, լինի բնակավայր, ամբողջ պետություն, թե պետությունների մի ամբողջ խումբ, էկոզբոսաշրջությունը չի կարող ձևավորվել և զարգանալ «դատարկ տեղում»: Այդ նախադրյալների, նախապայմանների, գործոնների ամբողջությունը մենք անվանում ենք «զբոսաշրջության զարգացման ներուժ»: Աշխարհագրությունը, լինելով համալիրային գիտություն, փորձում է իր գիտապրակտիկ ներուժը կիրառել էկոզբոսաշրջության բնագավառում: Էկոզբոսաշրջությունը հենց ինքն է կապ ստեղծում աշխարհագրական բազմաթիվ գործոնների հետ, տարածքի բնական, հասարակական երևույթների հետ: Աշխարհագրությունն է մեզ թույլ տալիս բացահայտել և խորքային ուսումնասիրել այս կամ այն տարածաշրջանը՝ որպես էկոզբոսաշրջության զարգացման պոտենցիալ նախադրյալ: Էկոզբոսաշրջության զարգացումը ՀՀ-ում հիմնականում պայմանավորված է աշխարհագրական գործոնների առանձնահատկություններով: Էկոզբոսաշրջության համար առանցքային են համարվում հետևյալ նախադրյալները՝ մակերևույթի ձևերը՝ հարթավայրեր, լեռներ, անդնդախոր ձորեր, բլուրներ, լանդշաֆտային բազմազանությունը, նպաստավոր կլիմայական պայմանները, ջրագրական ցանցը, բուսական և կենդանական աշխարհը, ԲՀՊՏ-ները: ՀՀ էկոզբոսաշրջության գլխավոր աշխարհագրական առանձնահատկություններից մեկը լանդշաֆտի փոփոխությունն է տասնյակ կիլոմետրերի վրա: Լանդշաֆտային բազմազանությունն իրենից ներկայացնում է բնական միջավայրի բաղադրիչների՝ ռելիեֆ, բուսական և կենդանական աշխարհ, մակերևութային և ստորերկրյա ջրեր, հող և այլ բաղադրիչների բազմազանությունը:

Էկոզբոսաշրջության զարգացման նախադրյալ են հանդիսանում առանձին լեռները և լեռնահովիտները: Լեռնային գետահովիտներին առանձնակի գրավչություն և հմայք են հաղորդում ջրվեժները (Շաքիի, Ջերմուկի, Թռչկանի, Որոտանի,

Գեղարոտի, Լաստիվերի), ռելիեֆային-հորինվածքային ուշագրավ ձևերը, բազալտային սյունաձև և բազմանկյուն առանձնացումները Արփայի, Ազատի և Հրազդանի հովիտներում: ՀՀ-ում նշանավոր են Որոտանի կիրճը, Դեբեդի, Ազատի, Հրազդանի հովիտները, Ջերմուկի կիրճը: Գեղեցիկ բնապատկերներ կարելի է տեսնել գրեթե բոլոր էկոզոոսաշրջային երթուղիների ընթացքում: Քարանձավները ևս էկոզոոսաշրջութային մեծ դեր ու նշանակություն ունեն: ՀՀ-ում քարանձավներով առավել հարուստ է Վայոց ձորի մարզը. այստեղ են Արջերի, Սոզոմուկի, Մագիլի քարանձավները:

ՀՀ կլիման խիստ բազմազան է: ՀՀ-ում կլիման փոխվում է վերընթաց գոտիականությամբ: Շնորհիվ բարձրության մեծ տարբերությունների և լեռնային ռելիեֆի, ՀՀ-ում առկա են կլիմայական հիմնական տիպերը՝ սկսած ցուրտ լեռնայինից մինչև չոր մերձարևադարձային: ՀՀ-ում զբոսաշրջիկը մեկ օրում կարող է «բնեռային շրջանից հասնել մինչև մերձարևադարձ»:

ՀՀ աչքի են ընկնում նաև ջրագրական ցանցի յուրահատկությամբ. կան շատ արագահոս սահանքային լեռնային գետեր, գեղատեսիլ լճեր:

ՀՀ ունի բուսականության աշխարհի բազմազանություն, պայմանավորված նաև խաչմերուկային դիրքով: ՀՀ հանդիպում են 350 տեսակի թռչուններ, և սա հանդիսանում է թռչունների դիտարկման (birdwatching) զարգացման նախադրյալ, 3500 տեսակի բույսեր, որոնցից 452-ը գրանցված է Կարմիր գրքում, հաշվում է շուրջ 12000 կենդանատեսակ:

Էկոզոոսաշրջության զարգացման գործում կարևոր դեր ու նշանակություն կարող է ունենալ բնության հատուկ պահպանվող տարածքները՝ ազգային պարկերը, պետական արգելոցները, արգելավայրերը և բնության հուշարձանները. ընդհանուր մակերեսով՝ երկրի տարածքի մոտ 13%-ը: ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքների պահպանման գործընթացը սկսվել է դեռևս 1958թ-ին: ՀՀ-ում առկա է 3 արգելոց, 4 ազգային պարկ, 27 պետական արգելավայր, 232 բնության հուշարձան: Նմանատիպ հաստատությունների նպատակն է ստեղծել յուրահատուկ հավաքածուներ՝ կենսաբազմազանության պահպանման համար: Վերջին տարիներին ՀՀ մի շարք ԲՀՊՏ-ներում մշակվել են կառավարման պլաններ, որոնցում ներառված են էկոզոոսաշրջության զարգացման ծրագրեր, մշակվել են էկոզոոսաշրջային երթուղիներ (Գայան ժ., 2007):

Էկոզոոսաշրջության զարգացման շատ նախադրյալներ կան հանրապետությունում, սակայն պետական հոգածության կարիք է զգացվում այս ասպարեզում: Միաժամանակ ՀՀ-ում իրականացվող ոչ կայուն բնօգտագործումը՝ արտահայատված պոչամբարների, բաց եղանակով շահագործվող հանքերի տեսքով և այլն, մեծ վտանգ է ներկայացնում էկոզոոսաշրջության զարգացման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գայան ժ., Էկոտուրիզմը բնության հատուկ պահպանվող տարածքներում: Երևան, 2007, 100 էջ
2. Косолапов А.Б. Теория и практика экологического туризма, Москва, 2005, 240 с.

3. Храбовченко В.В Экологический туризм, Москва, 2004, 262 с.
4. Hawkins K. & D. Ecotourism: A Guide for Planners and Managers, Bennington, 2001, 175 p.
5. Holden A. Tourism Studies and the Social Sciences, London, 2005, 241 p.
6. Honey M. Ecotourism and Sustainable Development: Who owns paradise? Washington, 1999, 405 p.

THE ESSENTIALS OF ECOTOURISM AND ITS GEOGRAPHICAL PECULIARITIES
OF DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Petakchyan M.H.

Yerevan State University, Yerevan, Republic of Armenia, marina.petakchyan@ysu.am

ANNOTATION

This article analyzes and presents the essence of ecotourism from geographical point of view, the current state of ecotourism in Armenia and the geographical factors, which can affect on its development. It also introduces the relationship between geography and ecotourism. It is also suggested to create a platform for exchange of ideas and experience, to formulate a modern infrastructure of ecotourism in order to make its potential more accessible.

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ**

Մանասյան Գ. Ս.

Եվրոպական համալսարան, Երևան, Հայաստանի Հանրապետություն gor_manasyan@mail.ru

Տարածքային զարգացման առումով ՀՀ-ում առկա են միջաբք հիմնախնդիրներ, որոնք դրսևորվում են տարածքային ոչ համաչափ զարգացման ձևով: Տարածքային զարգացման անհամաչափությունները հիմնականում արտահայտվում են մայրաքաղաքում տնտեսության համակենտրոնացման, նրա տնտեսական դերի և նշանակության անընդհատ աճով, ինչի արդյունքում էլ ավելի է մեծանում Երևանի և մարզերի միջև բնակչության զբաղվածության և կենսամակարդակի ճեղքվածքը (Տիգրանյան, 2014): Այսպես, հանրապետության բնակչության 64%-ն ապրում է մարզերում (2017 թ. հունվարի 1-ի դրությամբ), որի փոխարեն ՀՀ-ի համայնքներին բաժին է հասնում ՀՆԱ-ի չնչին մասը:

Այդուհանդերձ, ՀՀ-ի նման բնական պաշարներով աղքատ և տարածքով փոքր երկրի համար տնտեսության ու դրա ենթակառուցվածքների ապակենտրոնացումը, համայնքների համաչափ և կայուն զարգացումը, անկասկած, հրատապ հիմնախնդիր է: Իսկ դրա լուծման ուղիներից մեկը զբոսաշրջության ոլորտի զարգացումն է, որը հանդիսանում է խթան ամբողջ տնտեսության և նրա ենթակառուցվածքների զարգացման համար: